13072

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«03» 10 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0144-22

Ձեռնարկողը՝ ***«ՎՀ Քոնսթրաքշն» ՍՊԸ***
Ք. Երևան, Զաքարիա Քանաքեռցու 106շ, բն.8

Գործունեությունը՝ ***Դավիթ Անհաղթ փողոցի 14/10, 14/11, 14/14 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0144-22

<03> 10 2022թ.

Դավիթ Անհաղթի փողոցի 14/10, 14/11, 14/14 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՎՀ Քոնսթրաքշն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Դավիթ Անհաղթ փողոցի 14/10, 14/11, 14/14 հասցեներում:

Հողամասի նպատակային նշանակությունը, կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի և հասարակական օբյեկտի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի, այն է՝ 1500 քմ-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները:

Նկարագրական մաս. Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրած ճարտարապետահատակագծային (N 01/18-07/2-21141-231) առաջադրանքը: Հողամասի ռելիեֆը ունի 9 մետր տարբերություն Ուլնեցի-Ռուբինյան փողոցից մինչև զուգահեռ սպասարկող փողոցը: Վերին, փողոցային նիշից կառուցապատման բարձրությունը սահմանվել է 28մ և ստորին նախագծային 0-ական նիշից 16.5մ:

Մասնաշենք /Ա/-ի և /Գ/-ի նախագծում ընդունված ռելիեֆի աստիճանաձև կազմակերպումը հնարավորություն է տալիս ստանալ բնական լույսով ապահովված լրացուցիչ կիսանկուղային հարկ, որի քաղաք ուղղված հարավային կեսը ծառայում է որպես լիարժեք բնակելի հարկ, իսկ վերջինիս հյուսիսային կեսը, որը նույնպես ապահովված է բնական լուսավորությամբ, նախատեսված է օգտագործել որպես օֆիսային տարածքներ, փողոցից առանձին մուտքերով: Երկրորդ, երրորդ և չորրորդ ստորգետնյա հարկերում տեղակայված են կայանատեղերը, որոնց մուտքը միակողմանի է՝ կարգավորվող մուտքի և ելքի լույսերով: Շենքերի տանիքը

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

օգտագործվող է, կանաչ ծածկով, նախատեսվում են բաց տեսահարթակներ, զուգարաններ, լողավազան: Քաղաք ուղղված հարավային ճակատը լուծված է մեծ լուսամուտներով: Հյուսիսային ճակատում օգտագործվել է փոխակերպվող ստվերների համակարգ՝ կանխելով ենթադրվող դիմացի բնակելի շենքի բնակարանների ուղղակի դիտումը, սակայն ապահովելով բավարար լուսավորություն: Կողային ճակատների լուծումները նախատեսվում են ստատիկ շերտավարագույրային համակարգով, արևի ճառագայթներին զուգահեռ թեքությամբ: Մասնաշենք /Բ/-ի լուծումը միջանցքային է, միջանցքը տեղադրված /Ա/ մասնաշենքի ուղղությամբ, ապահովելով անմիջական տեսանելիության բացառումը: Մասնաշենքի հիմնական ծավալը 4 հարկանի է, ընդհանուր օգտագործման տանիքով, իսկ եզրային մասերում՝ 5 հարկանի:

Նախագծում օգտագործված նյութերն են՝

-տրավերտին՝ (հղկված և փայլեցրած), օդափոխվող երեսապատումով, HPL պանելներով, ներառյալ ջերմամեկուսացումը:

- Բետոնի հարդարված մակերեսներ:
- Կախովի ճակատային ապակեպատում, թրծված ապակու քիվապատեր պատշգամբների և լոջիաների համար:
- Բազալտե սալիկներով երասապատում նկուղային հարկերում:
- Փայտ՝ բուսակամարների և ստվերների երեսապատման մեջ:

Շենքերի տանիքն օգտագործվող է, կանաչ ծածկով, նախատեսվում են բաց տեսահարթակներ, զուգարաններ, լողավազան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր: Տարածքում նախատեսվում է տնկել գիհի կազակական, ոսկեգույն թույա, ասպիրակ, ֆորզիցիա, բարբարիս, գնդաձև սամշիթ, կիպրոս, թզուկ վարդեր:

Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:

Նախագծում ընդունված է ճակատների կանաչապատում պատշգամբների ծաղկամաններով, իսկ պատշգամբների հարկից հարկ հակառակ թեքությունները հնարավորություն են տալիս ծաղկամաններում մինչև 5 մետր ընդհանուր բարձրության կարճ ծառեր օգտագործել, միաժամանակ ճակատի մոդուլը դարձնելով մասնակիորեն երկհարկանի: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք՝ մոտ 180խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի տեխնիկական ցուցանիշներն են:

Հողամասի մակերես՝ 4500քմ:

Կառուցապատման մակերես – 1981քմ:

Կանաչապատման մակերես – 1800.8քմ:

Ճանապարհի, մայթ և այլ – 718.2քմ:

Բնակարանների քանակ՝ 93:

Ստորգետնյա կայանատեղիների քանակ՝ 158:

Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ՝ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով:

Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ ավտոկայանատեղից: Արտածումը կատարվում է արտածման համակարգերի միջոցով: Օդահեռացումը կատարվում է երկու զոնաներից՝ վերևի և ներքևի: Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցներից օդի արտածումը բնական է:

Շենքերի տանիքները նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:

Հետիոտների անվտանգությունն ապահովելու նպատակով շինհրապարակն անհրաժեշտ է ցանկապատել 2.5մ բարձրությամբ թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված, նախատեսված է թիթեղյա ծածկոց:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Մասնաշենքերի միացումն արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորումն ու տեղադրումը:

Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս, մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 7.3տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 140խմ շինարարական աղբը

/ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի տարածք:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <Վեոլիա ջուր> ՓԲԸ ցանցին:

Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Ուլնեցի-Ռուբինյանց մայրուղիով անցնող d=200մմ ջրագծից: Կոյուղին հնարավոր է միացնել Ուլնեցի-Ռուբինյանց մայրուղիով անցնող d=500մմ կոյուղատարին, հեղեղատարը՝ Ուլնեցի-Ռուբինյանց մայրուղիով անցնող d=400մմ հեղեղատարին: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 190 ԿՎա պահանջվող ծախսով կիրականացվի ՏԵ0306-ի 6 ԿՎ ԲՍ-ից սնվող, կառուցվելիք ենթակայանի 0,4 ԿՎ վահանից:

Գազամատակարարումը համաձայն տեխնիկական պայմանի P= 0,3 ՄՊա ճնշման և Q=150 խմ/ժամ նախատեսվող ծախսով կիրականացվի Երևան-1 ԳԲԿ-ն սնող Dպ-700 կողմնատար-գազատարի 5.9 կմ-ից:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

- Շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան:
- Շինհրապարակում կտեղադրվեն համապատասխան տեղեկատվական վահանակներ:
- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- Շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով:
- Սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
-Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:
- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
-Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին:

Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը:

-Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
-Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1625000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն և Երևանի քաղաքապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է հայտում նշված հողամասի առնվազն 40%-ն ապահովել որպես կանաչապատման տարածք:
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինհրապարակից ավտոմեքենաների ելքի ժամանակ անհրաժեշտ է լվանալ տեխնիկական միջոցների անվադողերը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել:
- Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
- Հետիոտների անվտանգությունն ապահովելու նպատակով շինհրապարակն անհրաժեշտ է ցանկապատել, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:
- Շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասն անհրաժեշտ է ծածկել անթափանց թաղանթով:
- Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎՀ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Դավիթ Անհաղթի փողոցի 14/10, 14/11, 14/14 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ Գոհար Մինասյան